

Թաւասպարաց, Յեմատակաց, Իժմախաց, Գաթաց եւ Գղուարաց, Գուգարաց, Շչբաց եւ ճղբաց եւ Բաղասճաց եւ Եգերսուանացն<sup>1</sup>, եւ այլոց խառնադանճ բազմութեամբ, անթիւ բանակն<sup>2</sup> վաչկատուն զաւրութեանց, որուն միանգամ ինքն իշխեր զաւրացն բազմաց: 3 Եկն անց ըստ իւր սահմանն ընդ գետն մեծ ընդ Կուր, եւ եկն տարածեցաւ ելից գերկիրն Յայոց աշխարհին: 4 Եւ չգոյր թիւ բազմութեան հեծելազար գնդացն, եւ ոչ համար շերտաւոր հետեւակ զաւրուն. զի եւ ինքեանք զինքեանս զիւրեանց զաւրսն թուել ոչ կարէին: 5 Բայց ուր լինէր հանդէս, ի նշանաւոր տեղիս գնդի գնդի, դրաւշու դրաւշու, վաշտուց վաշտուց, յերեւելի յերեւելի տեղեաց՝ մէն մի բռնաբար առ այր հրամայէին, զի բերցեն ընկեսցեն՝ շեղջ կուտել. զի որչափ լիցի, այնու երեւեսցի նշանակ բազմութեանն, առ իմանալ առ վաղիւ անցելոց իրացն ահաւորութեան նշանակ: 6 Եւ ընդ որ միանգամ անցանէին, այսպէս թողուին յամենայն ճանապարհակիցս, ի վերայ անցից պողոտայից: 7 Եւ ելին լցին ծածկեցին զամենայն երկիրն Յայոց. քանդեցին, գերեցին, առ հասարակ աւերեցին. սփռեցան տարածեցան զսահմանաւքն, լի եւ լի ծաւալեցան մինչեւ ի փոքր քաղաքիկն Սատաղու, եւ մինչեւ ի Գանձակ սահմանս ատրպատական. խաղացուցին ի մի վայր ժողովեցին, ի ժամադիր կողմանս յԱյրարատեան գաւառին բանակ մեծ լինէր:

8 Եւ խոյս ետ թագաւորն Յայոց Խոսրով յիւրմէ եղբարցն, նոյն ի Սանեսանայ յարթայէն Մազբթաց. եւ անկան յամուր բերդն Դարեւնից յերկիրն Կովկայ, եւ ընդ նմա ծերունին Վրթանէս եպիսկոպոսապետն Յայոց: 9 Ապա առնուին պահս պահել, եւ խնդրել յԱստուծոյ՝ զի փրկեսցէ զնոսա յայնմ ի դառն դահճէն, եւ սկսան խնդրել ի Տեառնէ Աստուծոյ: 10 Եւ նա ծածկեալ բռնացեալ ունէր գերկիրն առ հասարակ իբրեւ տարի մի: 11 Ապա եկն Եհաս Վաչէ որդի Արտաւազդայ ի Մամիկոնեանն տոհմէն, զաւրավար ամենայն Յայոց մեծաց: 12 Չի երթեալ էր նա ի ժամանակին յայնմիկ գերկայն ճանապարհս ի կողմանս Յունաց: 13 Ապա ժողովեաց նա զամենայն քաջս քաջս նախարարացն, եւ գունդ կազմէր բազում յոյժ. եւ հասանէր անկանէր ի վերայ բանակին, յառաւաւտուն ժամուն այգանալոյն պաշտամանն. զի բանակեալ էին նոքա ի լերինն՝ որ կոչի Յլու գլուխ. եւ առ հասարակ ընդ սուր հանին զամենեսեան, եւ ոչ մի ոք ոչ ապրեցուցանէր, եւ դարձուցանէր զբազմութիւն գերեացն: 14 Եւ յետ այսորիկ առնոյր զաւարսն, խաղայր գնայր երթայր իջանէր ի դաշտն Այրարատեան գաւառին. երթայր գտանէր զՍանեսան թագաւորն Մազբթաց բուն գնդան, անթիւ անհամար զաւրաւքն հանդերձ ի

1 Թուի ուղղելի՝ Եգերացուց (եւ Սուանեանց)

2 Յոր. միում՝ անթիւ անքնակն